

ՎՈԼՈԴՅԱ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ԿԵՆՍԱՏՈՒ ԱՌԱՎՈՏ*

«Եւ եղիցի քեզ ուրախութիւն եւ ցնծութիւն,
եւ բազումք ի ծննդեան նորա խնդասցեն»:

Զառաքի-Խանի վանեցիների այս փոքրիկ հավաքականն ուժերի գերլարումով, համարյա հուսահատ և օրհասական վիճակում, այսպես շուրջ տասը տարիներ անցկացրեց՝ մաքառելով, պայքարելով ընդդեմ մահվան, իր հանապազօրյա հացը մի կերպ ձեռք բերելով հանուն կյանքի պայքարի գերագույն ջանքերի գնով: Համենայն դեպս ապագայի նկատմամբ նրա ունեցած անհողդողդ, հաստատակամ հավատը նրան աստիճանաբար, ճիշտ է՝ շատ դանդաղ, բայց և այնպես նպատակաուղղված տանում էր դեպի հուսադրող օրեր:

Անցնող այս տասը տարիների ընթացքում շա՜տ ու շատ պղտոր ջրեր էին հոսել: Հայաստանը, եթե կարելի է այդպես անվանել, բազմաթիվ անգամներ ձեռքից ձեռք էր անցել, և յուրաքանչյուր իշխող ժողովուրդ կամ հայ կուսակցական խմբավորում իր կամքն էր պարտադրել մեր բազմաչարչար ժողովրդին: Այստեղ ի ցավ սրտի պետք է ասել, որ Մեծ եղեռնից մազապուրծ հայ ժողովրդի մի ստվար հատված, հանուն իր գոյատևման, տարասփռվեց աշխարհով մեկ՝ իր ապագա ճակատագիրը որոնելով օտար, սառը ափերում:

Վերջապես, ի բարեբախտություն գաղթական հայերի, սովը համարյա դադարել էր նրանց հակոտնյա ուղեկիցը լինելուց: Երևանում, գավառական այս փոքրիկ կենտրոն գյուղաքաղաքում, մոտիկ անցյալում դեռևս զգալի էր սովահարների և սովամահների քանակը: Սակայն այժմ, բարեպաշտ հայ ժողովրդի անձնուրաց ջանքերի գնով, կարծես ընդմիշտ վերացել էր ճակատագրական այդ ահավոր սարսափը: Հայ ժողովուրդն իր չափազանց համեստ աշխատանքի շնորհիվ սկսում էր կամաց-կամաց հաղթահարել անցյալի բոլոր դժվարությունները և աստիճանաբար ընթանալ դեպի նորօրյա խաղա՜ղ ժամանակներ...

---

* Հինգերորդ մասը տես №№ Է–Ը, էջ 190:

Անցնող այս տասը տարիների ընթացքում Գրիգորի և Վարդանի ընտանիքներն իրենց օրերն անց էին կացնում համեմատաբար արդեն բարվոք վիճակում: Գրիգորն ու Վարդանը որոշ ժամանակ կատարեցին այն աշխատանքը, ինչ նրանց խորհուրդ էր տվել Զադոն: Նրանք առավոտից մինչև երեկո Ղանթարի շուկայի մոտ վաճառում էին արևածաղկի և դդումի բոված սերմեր՝ բաժակով և կշռաչափով: Սերմերի վաճառքից ստացված եկամուտով նրանք կարողանում էին հոգալ իրենց ընտանիքների հոգսերը: Կանանց՝ Սաթենիկի և Զարերի աշխատանքն էլ հեշտ չէր: Նրանք ամբողջ ցերեկը համարյա տքնում էին հում սերմերը աղով բովելու այդ խիստ ծանր ու հոգնեցուցիչ պարտականության ահավոր բեռի տակ, որպեսզի դրանք պատրաստ լինեին հաջորդ օրը շուկա տանելու համար: Բովում էին բակում, օջախի վրա:

Ի միջի այլոց այստեղ պետք է ասել, որ այս երկու եղբայրների հիմնական եկամուտը ոչ թե արևածաղկի կամ դդումի բոված սերմերի վաճառքից ստացված շահույթն էր, այլ ոսկեդրամի առևտրի: Նրանք գնում էին ռուսական կամ թուրքական ոսկեդրամ և վաճառում որոշ շահույթով: Իհարկե այս փոքրիկ առևտրական գործարքը նրանք կատարում էին խստագույնս գաղտնի, քանի որ նորահաստատ իշխանություններն ահավոր պատիժ էին սահմանել վալյուտային մասնավոր գործարքների համար:

Հայաստանում խորհրդային կարգեր հաստատվելու հինգերորդ տարեդարձին ուղղակի համընկավ Գրիգորի ընտանիքում տեղի ունեցած երկրորդ լուրջ իրադարձությունը: Լույս աշխարհ եկավ գաղթի ճանապարհին անմեղ նահատակված Վարազդատի անվանակիցը: Ինչո՞ւ եմ ասում երկրորդ, որովհետև առաջին անմոռաց ցնծությունն այդ ընտանիքում տեղի էր ունեցել յոթ տարի առաջ, 1918 թվականի գարնանը, որը զուգադիպեց Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման թվականին, երբ նրանց ընտանիքում կայացավ ետարհավիրքյան շրջանի ամենալուրջ բեկումը. ծնվեց անմեղ ու սուրբ նահատակ Զարմիլեի անվանակիցը:

Այս երկրորդ լուրջ իրադարձությամբ Գրիգորի ընտանիքը կարծես վերագտավ իրեն, վերածնվեց կրկին: Նորից, ինչպես ոչ վաղ անցյալում Վանում, նույն անունները սկսեցին հոլովվել նրանց ընտանիքում:

Այս երկրորդ՝ ընտանեկան լուրջ ու բեկումնային կյանքի իրադարձության առթիվ Գրիգորն ու Սաթենիկը խիստ իրարանցման մեջ էին՝ այս անգամ արդեն չափազանց հաճելի և հոգեհորոգ անհանգստությամբ: Նրանք պատրաստվում էին նշելու իրենց օջախի մեկընդմիշտ ու շարունակական գոյատևման այդ բեկումնային իրադարձությունը: Մատաղացու ոչխար էին գնել և հաջորդ՝ կիրակի օրն այն պետք է զոհաբերեին ամենակարող Տիրոջը Երևանի Ս. Աստվածածին եկեղեցում ի նշան Նրա անսահման գթասրտության իրենց ընտանիքի նկատմամբ վերջին տարիների այս ահավոր օրերին:

Գրիգորն ու Վարդանը վաղուց արդեն գտել էին իրենց քրոջը՝ Սրբուհուն, իր որդու՝ Հակոբի հետ: Վերջինս երկու տարով մեծ էր փոքրիկ Վազգենից: Սրբուհին եղբայրների ավագն էր: Նրա ամուսինը զոհվել էր գաղթի ահավոր օրերին: Ի

տարբերություն շատ-շատերի, նա զինված էր եղել հրացանով և գաղթի ճանապարհին իր համեստ կարողությամբ կռվել էր թուրքի դեմ ի պաշտպանություն և՛ իր ընտանիքի, և՛ շուրջ-բոլորը եղող գաղթականների կյանքի:

Զարերը գտել էր իր քրոջը՝ Վանուհուն, և նրա ամուսնուն՝ Մաթևոսին: Մաթևոսը հարում էր դաշնակցական կուսակցությանը և իր գաղափարներով ու ողջ էությամբ նվիրված էր հայրենիքի և հայ ժողովրդի պաշտպանության նվիրական ու վեհ գործին: Բարձրահասակ էր, գեղեցկատես, առնական ու համարձակ: Կլիներ շուրջ 30 տարեկան: Կինը նրանից կրտսեր էր երկու տարով: Վանուհին նույնպես գեղեցիկ էր, բարետես, սակայն խիստ հուսահատ և ընկճված: Նրա հինգամյա միակ զավակը զոհվել էր գաղթի թոհուբոհի օրերին: Գաղթի ճանապարհին Վանուհին, իր շալակին կապած ունենալով որդուն, քայլել էր, քայլել միշտ առաջ՝ փրկելու համար իր և որդու կյանքը՝ սակայն անտեղյակ լինելով, որ որդին արդեն մի քանի ժամ էր, ինչ մեռած էր, և ինքն իր շալակին կրել էր միայն որդու դին: Քանի դեռ երեխան լուռ էր, նրան թվացել էր, թե նա քնած է:

Մաթևոսը և՛ Վանում, և՛ գաղթից հետո, առաջին տարիներին, տանը համարյա չէր լինում՝ հայրենիքի և հայ ժողովրդի պաշտպանության գործը համարելով ամենակորևոր և առաջնահերթ խնդիր: Թուրքի անմարդկային բարբարոսությունները տեսնելով, նրա նկատմամբ եղել էր խիստ դաժան և անգութ: Պատմում են, թե երբ Մաթևոսն իր ջոկատով ռազմի դաշտ էր դուրս գալիս, թուրքը, ժողովրդական խոսքով ասած՝ հազար թուման կտար մեկ մկան ծակի համար:

Նորեկները կարճ ժամանակ էր, ինչ բնակվում էին Զառաբի-Խանում, Գրիգորի և Վարդանի ընտանիքների հետ: Նրանց միատեղ ապրելու համար այդ բնակարանն արդեն չափազանց նեղվածք էր: Այդ իսկ պատճառով Վարդանը և Մաթևոսը Ալավերդյան փողոցի վրա տուն էին գնել, և նրանք՝ Վարդանը, Զարերը, Սրբուհին՝ իր որդու՝ Հակոբի հետ, Մաթևոսը և Վանուհին պատրաստվում էին օրերս տեղափոխվելու նոր բնակարան: Նոր տունը մեկ ուղիղ գծի վրա երեք առանձին բնակարաններից բաղկացած մի շինություն էր, շուրջ 200 քառակուսի մետր բակով՝ տարբեր տեսակի իր պտղատու ծառերով:

Փոքրիկ Վազգենն արդեն բոլորել էր իր 17 տարին և դարձել համակրելի մի պատանի: Նույն համեմատությամբ մեծացել էին նաև մեզ ծանոթ վանեցիների ընտանիքների մյուս երեխաները:

Մեծացել էին նաև Գրիգորենց ընտանիքի հարևանությամբ բնակվող Մարանդիզի Ավետիսի աղջիկները: Մարանդիզի Ավետիսը մի քանի տարի էր, ինչ ամուսնացել էր իրեն հասակակից մի որբևայրի կնոջ՝ Լուսունթագի հետ և նրանից ուներ ևս մի աղջիկ, որին կոչել էին Վարդիթեր անունով: Մարանդիզի Ավետիսի ավագ դուստրը՝ Արուսյակը, ամուսնացել էր զառաբիխանցի մի երիտասարդի՝ Վարդգեսի հետ, որի ծնողները նույնպես վանեցիներ էին: Վարդգեսի մայրը Զառաբի-Խանում հայտնի էր տատմեր Աղավնի անունով: Զառաբի-Խանի յուրաքանչյուր ընտանիք տատմեր Աղավնիի ձեռքով էր նոր կյանք ու երկնային բերկրանք ստանում:

Պատանի Վազգենը մի քանի տարի էր, ինչ սիրահետում էր Մարանդիզի Ավետիսի կրտսեր դստերը՝ Աղավնիին՝ սկզբում մանկական, իսկ հետո արդեն՝ պատանեկան լիարժեք և նվիրական սիրով: Աղավնին իր էությամբ արժանի էր կոչվելու այդ անվամբ. բարեհոգի էր, ազնիվ, առաքինի, ամոթխած և ... սիրունատես:

Զադոն, այդ գործունյա և չափազանց համարձակ մարդը, երկար ժամանակ էր, ինչ սայլով դուրս չէր գալիս աշխատանքի: Մինչ այդ նրան մեկ-երկու անգամ ծեծված և վիրավոր տուն էին բերել՝ համարյա ուշակորույս: Հետագայում միայն պարզվեց, թե ինչու: Մարանդիզի Ավետիսը և Զադոն կապի մեջ էին մի ավազակախմբի հետ: Նրանք գիշերով դուրս էին գալիս քաղաքից ու ավազակային հարձակում կատարում Ղանթարի շուկա գյուղատնտեսական մթերք տեղափոխող հարուստ գյուղացիների և կամ հարուստ արդյունաբերական ապրանքատերերի վրա, թալանում նրանց, սպանում և կամ, մահամերձ վիճակում թողնելով ճանապարհին, հեռանում: Թալանված ապրանքը սայլով քաղաք էր տեղափոխում Զադոն, իսկ ավազակախումբը, նստելով Մարանդիզի Ավետիսի ձիակառքը, ողջ ճանապարհին աչալուրջ հսկում էր թալանն ապահով տեղ հասցնելու գործին: Բայց մեկ-երկու անգամ ավազակախումբը հանդիպել էր մինչև ատամները զինված ապրանքատերերի և լավ «դաս» ստացել նրանցից: Ահա քաղած այս «դասերից» էր, որ Զադոն հեռացել էր այդ խմբից և ամբողջ օրը համարյա տանն էր անցկացնում, տաք եղանակներին՝ ուղղակի տան մոտ հանգրվանած սայլի վրա կիսապառկած:

Իսկ Մարանդիզի Ավետիսը դեռևս շարունակում էր կապը նրանց հետ: Ավազակախումբը օրը մի քանի անգամ ձիակառքի կարիք էր ունենում, և Մարանդիզի Ավետիսը չէր համարձակվում մերժել նրանց, վախենում, սարսափում էր նրանցից: Մերժելով նրանց և կամ կապը խզելով նրանցից, նրան թվում էր, թե լիքը դրանով իրեն և իր ընտանիքին կենթարկի վտանգի: Մարանդիզի Ավետիսին թվում էր, թե ավազակախումբն ընդունակ է ամեն տեսակ բարբարոսության:

Ետ գնալով հիշենք շուրջ տասը տարի առաջ Զառաբի-Խանի իր տանը Մարկոս աղայի կասկածահարույց հարցը՝ ուղղված Զադոյին. «Տղա Զադո, տու կիշերներ համարյա տուն չես մնա, մութ-լուսու սեղով ո՞ւր ի կեթաս»: Ահա՛ թե ինչ: Ուրեմն Մարկոս աղան այն ժամանակ արդեն ուներ անառարկելի հիմքեր կասկածելու Զադոյի «աշխատանքի» նկատմամբ: Հիմնավորելով իր կասկածանքները, Մարկոս աղան մի քանի անգամ եղբայրաբար և հայրաբար խորհուրդ էր տվել Զադոյին՝ հրաժարվելու և հեռանալու այդ չարաբարո խմբից:

Զադոյի և Նանիկի ընտանիքում նույնպես տեղի էին ունեցել իրադարձություններ: Հինգ տարի առաջ ծնվել էր նրանց երկրորդ դուստրը՝ Վալիկը, իսկ երեք տարի առաջ՝ չորրորդ որդին՝ Օհանեսը:

Մնացականն ամուսնացել էր և այս երկրորդ կնոջից չորս տարի առաջ ունեցել մեկ աղջիկ, որին, ի հիշատակ իր առաջին կնոջ, կոչել էին Գոհար: Մնացականը, ամուսնությունից և երեխա ունենալուց հետո, անհավատալիորեն փոխվել էր, թոթափել իրենից իր մռայլությունն ու հուսահատությունը և դարձել, ինչպես երբևէ, նախկին կենսախինդ Մնոն: Նա մի քանի տարի էր, ինչ չէր բնակվում Զառաբի-Խանում: Ամուսնությունից անմիջապես հետո ընտանիքով տեղափոխվել և ապրում էր քաղաքի մի այլ մասում, Զառաբի-Խանից ոչ շատ հեռու:

***

Վերադառնանք Գրիգորի ընտանիքի այս հաճելի և վերջնականորեն բեկումնային օրվա իրարանցմանը:

Կիրակի օրը, վաղ առավոտյան, դեռևս արևը չծագած, մեզ ծանոթ վանեցիների գերդաստանը, նրանց միացած նաև նորեկ հարազատները, Մարկոս աղայի գլխավորությամբ, մեկնեց Ս. Աստվածածին եկեղեցի, որը գտնվում էր Զառաբի-Խանից շուրջ 5-6 կիլոմետր հեռավորության վրա, Նորքի գեղատեսիլ բարձունքին: Զադոյի սայլին տեղավորել էին մատաղացու ոչխարը, ուտեստեղենը, փոքրիկ տակառով գինին, մի քանի հաստ ծածկոցներ և սեղանի սփոռոցներ: Սայլին էին տեղավորվել Նանիկը, Սաթենիկը և Հռիփսիմեն՝ Մնացականի կինը՝ իրենց գրկի երեխաներով: Մնացածները՝ տղամարդ, կին թե չափահաս երեխաներ, գնում էին ոտքով, նույնիսկ՝ առանց ոտնամանների, որովհետև այդպե՛ս միայն պետք էր գնալ սրբատեղի:

Օրը պարզ էր, երկինքը՝ ջինջ: Երբ տեղ հասան, արևն արդեն դուրս էր եկել և հաճելիորեն ջերմացնում էր բոլորին: Ս. Աստվածածին եկեղեցու մոտ սայլը կանգ առավ: Նանիկը, Սաթենիկը և Հռիփսիմեն ցած իջան սայլից՝ գրկներին ունենալով իրենց երեխաներին: Չափահաս երեխաները, ո՛րը թռչկոտելով, ո՛րը մեծերի օգնությամբ, նույնպես իջան սայլից: Այնուհետև Զադոն սայլը մի կողմ քաշեց, ձիերն արձակեց, կապեց մի ծառից և երկուսի վզից էլ մեկական գարու տոպրակ կախեց: Ապա սայլի միջի եղած-չեղածամեն ինչ իջեցրին ցած: Բոլոր աշխատանքները վերջացնելուց հետո, Գրիգորը, Վարդանը, Մնացականը, Սաթենիկը՝ գրկին ունենալով իր անբաժանելի ուղեկցին՝ Վարազդատին, և Վազգենը ուղղվեցին դեպի եկեղեցի: Գրիգորը ներս մտավ: Քիչ հետո եկեղեցուց դուրս եկավ ալեհեր մի քահանա՝ ուղեկցությամբ Գրիգորի, և մոտեցավ եկեղեցու մոտ հավաքված վերջինիս հարազատներին: Տեր Հայրը բոլորին կանգնեցրեց մեկ շարքի վրա՝ դեմքով դեպի արևելք, խաչակնքեց նրանց և արտասանեց «Հայր մեր»-ը: Այնուհետև խաչակնքեց մատաղի համար նախատեսված աղը և արտասանեց աղօրհնեքի աղոթքը.

– «Օրհնեա, Տէր, ողորմութեամբդ Քով զաղս զայս, եւ սրբեա զսա, զի ամենայն ինչ, յոր եւ խառնեսցի սա, եղիցի Քեզ ի հաճոյս եւ յընդունելութիւն, եւ մեզ ի մաքրութիւն եւ յառողջութիւն հոգւոյ եւ մարմնոյ»:

Աղօրհնեքի կարգը կատարելուց հետո, բոլորը մոտեցան ու համբուրեցին Տեր Հոր աջը և ապա վերադարձան իրենց ընդհանուր խմբի մոտ:

Քիչ հետո արդեն օջախի վրա, մի մեծ պղնձե կաթսայի մեջ, բլթբլթում էր մատաղը: Մի քանիսը զբաղվեցին մատաղը եփելով, իսկ մյուսները, խաչակնքելով երեսները, ներս մտան եկեղեցի: Արդեն սկսվել էր սուրբ պատարագի արարողությունը: Վանեցի մեր ուխտավորները եկեղեցում մոմ վառեցին, ամենաանկեղծ ու սրտաբուխ գոհաբանական խոսքեր ուղղեցին ամենակարող և ամենողորմ Աստծուն՝ հարազատ հայրենի եզերքը կորցրած և գաղթականի խարանը վաստակած նրանց այս չարքաշ ու նեղ օրերին զորավիգ լինելու համար, և, առանց սպասելու սուրբ պատարագի արարողության ավարտին, դուրս եկան եկեղեցուց՝ հոգով և մարմնով անսահմանորեն մաքրագործված:

Կանայք սկսել էին սեղանի պատրաստությունը: Գետնին փռված շորերի և ծածկոցների վրա նրանք հասցրել էին շարել տարբեր տեսակի ուտեստեղեն՝ լավաշ հաց, պանիր, Վանա ժուժիկ, խաշած ձու, կարմիր լոբի, ձուկ, կանաչեղեն՝ սոխ, կոտեմ, թարխուն, համեմ, սավզի և այլն: Մի քանի տեղ դրված էին սափորով գինի և օշարակ: Առայժմ, սակայն, ոչ մեկը չէր համարձակվում

մոտենալ սեղանին, թեև բոլորն էլ անասելի քաղցած էին: Տղամարդիկ և կանայք դեռևս զբաղված էին մատաղի և սեղանի պատրաստություններով: Սեղանին չմոտենալն ուներ իր հիմնավոր քրիստոնեական օրինապահությունը. բոլորն անհամբեր սպասում էին սուրբ պատարագի ավարտին: Երբ ավարտվեց սուրբ պատարագը, բոլորն անխտիր, խաչակնքելով երեսները, կրկին մտան եկեղեցի և Սուրբ Հաղորդություն ստացան սնահար պատարագիչ Հայր Սուրբի ձեռքից:

Այնուհետև նրանք վերադարձան և հավաքվեցին սեղանի շուրջ, սակայն ոչ մեկը չնստեց, որովհետև մատաղը առաջին հերթին պետք է բաժանվեր յոթ տեղ: Երբ ոխտավորին վայել ամեն արարողակարգ վերջացավ, և մատաղն էլ բաժանվեց յոթ տեղ, Մարկոս աղան, որպես ավագ, բոլորին առաջարկեց նստել: Իսկ Գրիգորն այս ընթացքում կրկին մոտեցավ նույն ալեհեր քահանային և խնդրեց օրհնել իրենց սեղանը: Տեր Հայրը բարեհամբույր կերպով ընդառաջեց Գրիգորի խնդրանքին, մոտեցավ վանեցի գաղթական ուխտավորների խմբին, կանգնեց սեղանի արևմտյան մասում, երեսով դեպի արևելք, և արտասանեց «Հայր մեր»-ը: Այնուհետև խաչակնքեց երեսը, ձեռքի արծաթապատ խաչով խաչակնքեց և օրհնեց սեղանը, վերցրեց գինով լիքը բաժակը և ասաց.

-Որդյակք իմ, ես հոգով ուրախ եմ և հպարտ, որ, կրելով այսքան տառապալից օրեր, դուք շարունակում եք մնալ հավատարիմ մեր Տեր Հիսուս Քրիստոսին, Նրա հավերժական պատվիրաններին, դուք, որ այս խառնակ ու դժնդակ օրերին, թողած ձեր առօրյա ծանր հոգսերը, չեք մոռացել ձեր անմահ նախնիների ավանդները: Ողջունում եմ ձեր այս քայլը: Ահա մի ապացույց, որ դուք իզուր չեք տոկացել այս դժվարին տարիներին: Ես հավատացած եմ, որ դուք, ինչպիսի՞ ծանր ու անելանելի պայմաններում էլ գտնվեք, չեք դրժի ձեր քրիստոնեական ուխտը և սիրով ու անձնդիր պատրաստակամությամբ կշարունակեք քրիստոնեին վայել ձեր հետագա կյանքը: Դուք պե՞տք է ապրեք, դուք պե՞տք է հավերժ գոյատևեք և բա՞ռնը պահեք հային արժանի ձեր անաղարտ պատիվը: Ես համոզված եմ դրանում: Աստված ընդունելի անի մատաղը: Վայելեք խաղաղությամբ:

Այնուհետև Արժանապատիվ Տեր Հայրը մի փոքր ըմպեց բաժակի գինուց, ցած դրեց այն, նստեց, վերցրեց մատաղից մի պատառ, որեց լավաշի մեջ և սկսեց ուտել: Բոլորը վերցրեցին գինու գավաթները, գլուխները խոնարհեցին դեպի ալեհեր քահանան ու մեծ պապակով դատարկեցին նրա անմահական պարուսակությունը:

Սկսվեց ճաշակման արարողությունը:

Սեղանն օրհնելուց մի քանի րոպե էլ չէր անցել, երբ Տեր Հայրը վեր կացավ տեղից և ասաց.

- Խաղաղություն՝ աշխարհին, խաղաղություն և բարօրություն նաև ձեզ, որդյակք իմ: Անուշ արեք և մնացեք խաղաղությամբ:

Այս ասելով ալեհեր քահանան քայլերն ուղղեց դեպի եկեղեցի: Բոլորի հայացքները մի պահ դեպի հեռացող Արժանապատիվ Տեր Հայրն էր:

Քահանայի հեռանալուց հետո, Գրիգորը վեր կացավ տեղից և ասաց.

- Մարկոս աղա, համացայն մեր ազգային սովորության, ես կառաջարկեմ, որ տու, որպես մեր ավագ, կառավարես էս սեղան:

Բոլորը, ի հավանություն Գրիգորի առաջարկի, ոտքի կանգնեցին, վեր բարձրացրեցին գինով լիքը գավաթները և «Կեցցե թամադան» արտասանելով դատարկեցին նրա պարունակությունը:

Մարկոս աղան սիրով ընդունեց սեղանակիցների առաջարկությունը, ոտքի կանգնեց, վերցրեց գինով լիքը բաժակը և ասաց.

– Նորեն տուք զի կտնեք խիստ ծանր, սակայն չափազանց հաճելի պարտավորության բեռի տակ: Ես սիրով կընդունեմ այն: Որպես սեղանի թամադա, իմ առաջին կարքաթրություն. քյանի որ վեր կենալու և նստելու համար տեղ անհարմար ի, ուստի կառաջարկեմ փոլորտ նստած խոսեք:

Մի փոքր դադար տալուց հետո, շարունակեց.

– Ես կուզեմ կրկնել Ձեր Հոր օրհնություն և մաղթանք. Աստված ընդունելի անի մատաղ:

«Աստված ընդունելի անի» ասելով բոլորը կրկին դատարկեցին իրենց գինու գավաթները:

Այնուհետև Մարկոս աղան շարունակեց.

– Ձեր Հայր խոսեց մեր փոլորի ամենացավոտ կողմի՝ մեր ներկա վիճակի մասին: Իրոք մեր ազգ մկա էլ լավ օրեր չի ապրի: Երկիր նորեն խառնակ ի: Կհիշե՞ք, ժամանակին ես ասացի, որ «մեր ժողովուրդ ուր երկիր անկախ հոչակեց, փայց ի՞նչ անկախ Հայաստան, Է՞ս ի անկախ Հայաստան: Վեր Էս չնչին խողակտորին անգամ մեր բազմատառապյալ ժողովուրդ հանքիստ չունի. շուրջպոլոր՝ ո՛չ մեկ պարեկամ ազգ, ո՛չ մեկ պարեկամ ժողովուրդ: Փոլոր ուրանց ժանիքներ սրած կսպասեն հարմար առիթի՝ վերչնկանապես մեզ հոշոտելու համար: Մենք թույլ ենք և անօգնական: Համարցակորեն պիտի ասել սակայն, որ մեր էս թուլություն անխզելիորեն կապված ի մեր ժողովրդի դարավոր անմիաբանության խետ: Ժողովուրդ եթե միաբան էլնի, ինոր կռել կամ կոտրել անհնար ի: Հիշեք ցախավելի պատմություն: Եթե մասնատես ցախավել և հետո միայն կռել կամ կոտրել ցանկանաս, հեշտությամբ կխասնես քյո նպատակին, իսկ եթե ցախավել ամփոխչական կապ ի, անհնար ի վեր ինոր ազդել: Էնի ամուր ի և անկոռելի»:

– Իմ միտք պարզաբանելու համար, – մի կում օշարակ ըմպելուց հետո շարունակեց Մարկոս աղան,– խոսեմ մեկ այլ հարցի մասին: Աստված ստեղծեց երկիր, մարդ արարած, կենդանական աշխարհ: Մարդ նույնպես կմտնի կենդանական աշխարհի համակարքի մեջ, թեև էնի ասում ի, իսկ մնացածներ՝ անասուն: Ցուրաքանչյուր կենդանու տեսակ ունի ուր տարածք, և ոչ մեկ այլ ցեղատեսակ իրավունք չունի խախտելու էտ սահմաններ: Մարդկային հասարակություն, Ադամից և Եվայից հետո, նույնպես պաժնվեց տարբեր ազգերի և ժողովուրդների՝ ուրանց անձեռնմխելի տարածքներով: Էս օրինաչափ պաժանումներ կենդանական աշխարհ պահպանեց դարերով, իսկ մարդկային հասարակություններ խախտեցին աստվածաստեղծ էս օրինաչափություն: Մարդ էնքա՛ն գազանացավ, որ ուրացավ ուր մարդկային փոլոր արժանիքներ և խրվեց ապականված ճահիճների մեջ, մոռացավ ուր Աստված, մոռացավ խիղճ և ցավ, մոռացավ էն ամեն աստվածային և մարդկային, որ փնություն շնորհել էր ուրան: Կենդանական աշխարհի ո՛չ մեկ տեսակ չի հոշոտի ուր ցեղակցին, բացի բորենուց: Մարդ արարած մկա ավելի՛ սարսափելի գազան ի, քյան բորենին: Ես նորեն կկրկնեմ և կասեմ. մարդկային հասարակություն խախտի՛ր ի աստվածաստեղծ

փնության օրինաչափություն: Մեր ժողովրդին բաժին խասած փնության օրինաչափության խախտման մեջ ես միմիայն կմեղադրեմ հենց մեր իսկ ժողովրդին՝ ուր անմիաբանությամբ: Անմիաբան ժողովուրդ չի կանա պահե ո՛չ ուրան, ո՛չ ուր հայրենիք: Էնի հաստատապես ենթակա ի կործանման: Կենդանին կյանքի գնով կպահպանի ուր ցեղ, տարածք և հարստություն, իսկ հայ ժողովուրդ շա՜տ ի հեռու էս ամենի գիտակցումից: Հայ ժողովուրդ ուր անմիաբանությամբ պատճառ կհանդիսանա ու հոշոտել կուտա և՛ ուր ցեղ, և՛ ուր խողեր ու հարստություն:

Մարկոս աղան այստեղ մի փոքր դադար տվեց:

- Ավելի լավ ի,- շարունակեց Մարկոս աղան,- փակենք էս նյութ և խոսենք մեր էսօրվա փուն նպատակի՝ մատաղօրհնեքի և մեզ կյանքի նոր լույս պարգևող նորածին Վարազդատի շուրջ: Քիրիքյոր, Սաթեն, ես մկա զի անսահման երջանիկ կզգամ, որ ձեր օջախ կրկին կմտնի ուր քաղցր աշխուժացման շրջան, օջախ, որուն լուսատու ուղեցույց հանդիսացավ նորածին Վարազդատ: Ապրեք երկա՜ր և բախտավոր: Թող էս նորածին ձեր օջախին պիրի խաղաղություն, սեր և երջանկություն: Աստուծո ամենազոր Աջ ձեր կյլխեն անպակաս մնա և մեր հանքուցյալ մեծերու օրհնություն՝ ձեզ միշտ ուղեցույց և ուղեկից:

Բոլոր սեղանակիցները վեր կացան տեղներից, խախտելով ու կարծես չհարգելով սեղանի մեծ իշխանավորի՝ թամադայի անդրանիկ կարգադրությունը, և զոհունակ արտահայտություններով խմեցին առաջարկված կենացը:

Այսպես անցան բավականին ժամեր: Մի քանի անգամ արդեն թարմացվել էին գինու սափորները: Սեղանի մասնակիցները, համեմատած վերջին ծանր տարիների հոգեկան ապրումներին, բարձր տրամադրության մեջ էին. ասում էին, խոսում, ծիծաղում: Այս անգամ նույնիսկ բարձր տրամադրության մեջ էր Մնացականը: Նա գինովցել էր, գլուխը կախել և քթի տակ ինչ-որ երգ էր դնդնում: Նկատելով Մնացականի բարձր տրամադրությունը, Մարկոս աղան, Զարուհին և հատկապես Սաթենիկն ու Նանիկը հոգեկան անսահման ցնծություն էին ապրում:

Աստվածահաճո այս ուրախ սեղանը շարունակվեց մինչև արևամուտ: